

## FORPOSTART PRODUCTION-ը և նրա երևանյան ներկայացուցիչ «Շոուսթար»ՄՊԸ-ն

### հայտարարում են

2016 թ. ապրիլի 7-ին Global Communications ընկերության կողմից ստացված թիվ 322 նամակի համաձայն, Էրոս Ռամազոտտիի՝ ս/թ ապրիլի 26-ին Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում նախատեսված համերգի տոմսերի ետ վերադարձը և դրանց դիմաց դրամական միջոցների փոխհատուցումը FORPOSTART PRODUCTION-ը պետք է իրականացնի Global Communications ընկերության կողմից սահմանված ժամանակահատվածում՝ ս/թ մայիսի 26-ից հուլիսի 26-ը, վերջինիս կողմից դրամական միջոցները ստանալուց հետո:

Այս պահին Մոսկվայի արբիտրաժային դատարանում ընթանում է դատական վարույթ՝ իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարած Trident Music S.R.L.-ի դեմ՝ որպես Էրոս Ռամազոտտիի պրոդյուսերական ընկերություն, որն անմիջականորեն պատասխանատու է ֆինանսական պարտավորությունների մասով, և RADIORAMA S.R.L.-ի դեմ՝ որպես Էրոս Ռամազոտտիի ծառայությունների մատուցման բացառիկ իրավունք ունեցող ընկերություն, համերգները՝ այդ թվում նաև Երևանում կայանալիք, չեղարկելու արդյունքում պատճառված վնասների հատուցման նպատակով:

Միջոցառման իրացված տոմսերի ետ վերադարձը և դրանց դրամական փոխհատուցումը կիրականացվեն ս/թ մայիսի 26-ից հուլիսի 26-ը ընկած ժամանակահատվածում: Global Communications-ից դրամական միջոցները ստանալուն պես FORPOSTART PRODUCTION-ը կփոխանցի դրանք «Շոուսթար» ՄՊԸ-ին, իսկ վերջինս էլ՝ տոմսարկղերին և տոմսերի իրացմամբ զբաղվող գործակալներին: Այնուհետև տոմսարկղերը և գործակալները կիրականացնեն տոմսերի ետ ընդունման և դրամական միջոցների փոխհատուցման գործընթացը՝ վերոնշյալ ժամանակահատվածում:

FORPOSTART PRODUCTION-ը և նրա երևանյան ներկայացուցիչ «Շոուսթար» ընկերությունը հայտարարում են, որ միջոցառման տոմսերի ետ վերադարձը և դրանց դիմաց դրամական փոխհատուցումը կիրականացնեն տոմսարկղերը և տոմսերի վաճառքով զբաղվող գործակալները ս/թ մայիսի 26-ից հուլիսի 26-ը:

Եվս մեկ անգամ խնդրում ենք համերգային ծրագրի տոմսեր ձեռք բերած բոլոր անձանց անվնաս և ամբողջական պահպանել տոմսերը և ՀԴՄ կտրոնները՝ տոմսերի ետ վերադարձման համար: Հետևեք մեր պաշտոնական կայքին՝ տոմսերի ետ վերադարձման գործընթացի ժամկետների և պայմանների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար:

Միաժամանակ հայտնում ենք, որ մեր ներկայացրած պայմաններին չհամաձայնելու դեպքում կարող եք դրանք բողոքարկել դատական կարգով:

FORPOSTART PRODUCTION և «Շոուսթար» ՍՊԸ